

ՀՀ Լոռու մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող հանձնաժողովի նիստի

16.04.2015թ.

ք. Վանաձոր

Նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամները, ինչպես նաև հրավիրված անձինք և ՁԼՄ – ների ներկայացուցիչները:

Օրակարգում՝

1. ՀՀ Լոռու մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացման ընթացքի մասին:

2. Ապրիլի 23-ին և 24 - ին մարզում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացման հետ կապված կազմակերպչական հարցեր:

Օրակարգի 1-ին հարցով ելույթ ունեցավ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մինաս Սայադյանը: Նա ներկայացրեց Մեծ Եղեռնի տարելիցին ընդառաջ՝ հանձնաժողովի նախորդ նիստում հաստատված միջոցառումներից մինչ օրս կազմակերպվածները, նշելով, որ անց են կացվել բազմաթիվ միջոցառումներ, բաց դասեր, թեմատիկ զրույցներ՝ մարզի հանրակրթական դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում, բուհերում, ինչպես նաև թեմատիկ ցուցահանդեսներ, խաչքարերի բացման հանդիսավոր արարողություններ՝ մի քանի համայնքներում, գրական երաժշտական ցերեկոյթներ՝ մշակութային հաստատություններում և այլն:

Այդ առթիվ իրենց կարծիքները հայտնեցին Գուրգեն Խաչատրյանը, Լևոն Ասլանյանը, Ֆելիքս Մովսիսյանը, Գոռ Բադյանը, այլոք:

Օրակարգի 2-րդ հարցով նախ ելույթ ունեցավ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Տիգրան Բադոյանը: Նա տեղեկացրեց Վանաձորի երիտասարդության կողմից ապրիլի 23-ի երեկոյան Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցուց դեպի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի կազմակերպվող ջահերով երթի անցկացման հետ կապված կազմակերպչական հարցերը: Տեղեկացվեց նաև, որ Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակում Եղեռնի զոհերի հիշատակի խաչքարի մոտ հոգեհանգստի կարգ կկատարվի, որից հետո երթի մասնակիցները կշարժվեն դեպի Հայքի հրապարակ: Այստեղ երիտասարդները լույսերով անմոռուկի պատկեր կկառուցեն:

Օրակարգի երկրորդ հարցի քննարկմանը մասնակցեցին Սամվել Խալաթյանը, Վահե Դոխոյանը, Արսեն Դարբինյանը, այլոք: Նրանք հանդես եկան մի շարք առաջարկություններով, որոնք հիմնականում առնչվում էին կազմակերպչական հարցերին: Գուրգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը նկատեց, որ հանրապետությունում, ապրիլի 23-ին, 19.15 րոպեին հայտարարելու է լռության րոպե, 100 անգամ հնչելու են եկեղեցիների զանգերը, ուստի, նպատակահարմար է, որ դրանից հետո մեկնարկվի ջահերով երթը: Այդ առաջարկը հանձնաժողովի անդամների կողմից

ընդունվեց միաձայն և առաջարկվեց միջոցառումների պլանում համապատասխան ճշգրտումներ կատարել:

Այնուհետև ապրիլի 24-ին կազմակերպվելիք երթի վերաբերյալ իր նկատառումները հայտնեց ՀՀ Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանը: Նա մարզպետարանի պատասխանատու աշխատողներին, ոստիկանության ներկայացուցիչներին և Լոռու մարզի փրկարարական վարչությանը հորդորեց լրացուցիչ զգոնություն ցուցաբերել երթերի ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ, Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանը հանձնարարեց ապրիլի 23-24-ի միջոցառումների մասին հանրությանը տեղեկացնել զանգվածային լրատվության միջոցներով:

Մարզպետը նշեց, որ Եղեռնին նվիրված մարզային միջոցառումները կշարունակվեն մինչև տարեվերջ:

ՀՀ Լոռու մարզպետ,  
հանձնաժողովի նախագահ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ